

Աստղիկ Ազիզբեկյան

ՀՀ ԵՎ ՌԴ ՄԻՋԵՎ ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Բանալի բառեր. Հայաստան, Ռուսաստան, հայկական գաղթավայրեր, մշակութային և հոգևոր առնչություններ, ճարտարապետություն, արվեստ, ուսումնական հաստատություններ, գիտություն, գրականություն, երաժշտություն:

ԽՍՀՄ փլուզման հետևանքով անկախություն ձեռք բերած Հայաստանի և Ռուսաստանի միջև հարաբերությունների զարգացման գործում կարևոր դեր են խաղում երկու ժողովուրդների պատմամշակութային կապերը: Հայ-ռուսական մշակութային և հոգևոր առնչությունները ձևավորվել են դեռևս միջնադարում: Արդեն Բագրատունիների թագավորության օրոք ընդլայնվեցին Հայաստանի մշակութային կապերը Կիևյան Ռուսիայի հետ: Դա պատահական չէր, քանի որ Բագրատունիների օրոք Հայաստանի մշակույթի ծաղկումը համընկնում էր նույն իրողության հետ Կիևյան Ռուսիայում¹: Հայ-ռուսական մշակութային կապերի և փոխազդեցությունների վառ վկայություններից են Կիևի սուրբ Սոֆիայի տաճարում 11-12-րդ դդ. տեղադրված և առ այսօր պահպանված Յարուսլավ Իմաստունի դամբարանի մարմարյա մեծ սարկոֆագի դեկորատիվ հարդարանքը, որը հիշեցնում է Հայաստանի 4-7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանների զարդարանքը: Սարկոֆագի դեկորատիվ հարդարանքի գեղանկարների նմանությունը, կափարիչի վրա հայերեն տապանագրերի առկայությունը ապացուցում են, որ 11-12-րդ դդ. Կիևում ապրել են ճանաչված հայ արհեստագործներ, որոնք իրենց հետքն են թողել ճարտարապետության և կիրառական արվեստի հուշարձաններում²: Դրանից գատ սուրբ Սոֆիայի տաճարի ներսի պատերի վրա առկա են հայերեն 24 արձանագրություններ, որոնք թվագրվում են հիմնականում 16-17-րդ դդ.: Այդ հայերեն արձանագրություններում հիշատակվում են տարբեր դասերի ու խավերի ներկայացուցիչներ, որոնք այլ հայ գաղթօջախներից ժամանելով Կիև իրենց մակագրություններն են թողել տաճարի պատերին³:

Ճարտարապետության և կիրառական արվեստի բնագավառում հայ-ռուսական կապերի վառ վկայություններից են նաև Հին Վոլինի Գալիչ քաղաքի մերձակայքում գտնվող 13-րդ դ. սկզբի սուրբ Պանտելեյմոնի եկեղեցին և ի պատիվ Գրիգոր Լուսավորիչի՝ 15-րդ դ. Նովգորոդում կառուցված տաճարը, որոնց ճարտարապետության մեջ առկա են հին հայկական ճարտարապետությանը բնորոշ հատկանիշների հետքեր, ինչպես նաև դրանց պատերի վրա կան հայերեն վիմագրություններ ու հայկական զարդանկարի համար ավանդական «Ծաղկած խաչի» ուրվապատկերներ և տաճարների ուրվագծեր⁴: Հատկանշական է, որ հայ ճարտարապետները, շինարարները, գեղանկարիչները մասնակցություն են ունեցել Ռուսաստանի տարբեր քաղաքներում կառուցված տաճարների, եկեղեցիների, վանքերի շինարարական աշխատանքներին ու պատկերազարդմանը: Հենց դրանով է պայմանավորված, որ Ռուսաստանի շատ տաճարներում, եկեղեցիներում և վանքերում առկա են հայկական սրբերին նվիրված առանձին մատուռներ, գավիթներ, կցակառույցներ, որմնանկարներ: Այս առումով առաջին հերթին պետք է հիշատակել 16-րդ դ. Մոսկվայում կառուցված Վասիլի Երանելու տաճարի համալիրում ավելի քան 5 դար կանգուն մնացած Գրիգոր Լուսավորիչին

¹ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920 թ.), եռահատորյակ, հատոր առաջին, Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները, Ե., 2003, էջ 43-45:

² Տե՛ս Халпахчян О.Х., Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре, Е., 1957, էջ 10, Հարությունյան Վ., Մի հայաստան մակագրության մասին // ՀՍՄՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1956, N 5, էջ 119:

³ Տե՛ս Григорян Григор, Армянские надписи киевского собора святой Софии // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, N 4, էջ 85-93:

⁴ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հատոր առաջին, էջ 48:

նվիրված Մեծ Հայաստանի եպիսկոպոս Գրիգորի եկեղեցին՝ Երանելու տաճարի գմբեթին կից վեր խոյացող գմբեթով¹, 12-րդ դարի նովգորոդյան հայտնի Սպաս Ներեդիցա տաճարը, որի մեջ կա ոչ միայն սուրբ Գրիգորի, այլև սուրբ Հռիփսիմեի որմնանակարը՝ Հայաստանի համանման հուշարձանների նմանությամբ²: Ընդ որում, Գրիգոր Լուսավորիչը պատկերված է Հին Հայաստանի եկեղեցիների որմնանկարներին բնորոշ զգեստավորմամբ³: Իրենց հերթին ռուս վարպետները Հայաստանում աշխատել են տեղացի վարպետների հետ: Այսպես օրինակ՝ Բագրատունիների հայկական թագավորության մայրաքաղաք Անիի լավագույն եկեղեցիներից մեկի որմնանկարման աշխատանքներին 13-րդ դարում մասնակցել է ռուս գեղանկարիչ Ֆլորը: Այդ որմնանկարներից մեկը պատկերում էր Կիևի մեծ իշխան Վլադիմիր Սոնոմախի թագը:

Միջնադարից սկսած՝ հայերին Ռուսաստանում եկեղեցիներ կառուցելու արտոնություն էր տրված: Նրանց կողմից 13-15-րդ դարերում Ղրիմում կառուցվեցին «Սուրբ Սարգիս», «Սուրբ Խաչ», «Հովհաննես Մկրտչի», «Գաբրիել և Միքայել հրեշտակապետերի», 18-19-րդ դդ. Նոր Նախիջևանում՝ «Սուրբ Խաչ», Պետերբուրգում՝ «Սուրբ Եկատերինայի», Մոսկվայում՝ «Սուրբ Աստվածածին», «Սուրբ Խաչ», «Սուրբ Հարություն» և այլ եկեղեցիներ, որոնք վկայում էին Ռուսաստանի հոգևոր-մշակութային կյանքում հայերի ունեցած զգալի դերի մասին: Ռուս-հայկական պատմամշակութային սերտ կապերի ցայտուն դրսևորումներից է նաև Գրիգոր Լուսավորիչի և 37 կույսերի (Հռիփսիմեի, Գայանեի և այլոց) պաշտանմունքի պահպանումը ռուսական եկեղեցու կողմից:

Ռուսիայի և Հայաստանի միջև դարավոր մշակութային առնչությունների վավերագրերից է ռուս գրականության հնագույն հուշարձաններից մեկի՝ «Բորիսի և Գլեբի վարքի» 1173 թ. կատարված հայերեն թարգմանությունը⁴, ինչը վկայում է ռուսական հոգևոր-մշակութային արժեքների հանդեպ ռուսահայ գաղթօջախներում հայ գրիչների կողմից ցուցաբերված հետաքրքրության մասին: Այս առումով նշենք, որ Ռուսաստանի հայ գրչության կարևոր կենտրոններից էր Ղրիմը: Այսօր մեզ են հասել թերակղզու հայաշատ տարբեր կենտրոններում 14-18-րդ դդ. գրված ավելի քան 300 ձեռագրեր⁵, որոնց հիշատակարանները առանձնակի նշանակություն ունեն պատմագիտության բնագավառում:

Ռուսաստանում հաստատված հայկական գաղթավայրերը 18-րդ դ. մշակութային կյանքի կարևոր կենտրոններ էին դարձել: Դրանցից յուրաքանչյուրը կարողացավ ստեղծել բավականին ուրույն մշակույթ, որը լինելով ազգային, կրում էր նաև ռուսական միջավայրի ազդեցությունը, միաժամանակ խաչաձևվում տեղական ժողովուրդների մշակութային կյանքի հետ: Այն դրսևորվում էր նաև կրթալուսավորական բնագավառում: Այս առումով հատկանշական էր, որ Ռուսաստանի հայաշատ վայրերում վերջիններիս հետ գործնական շփումների հաստատումը հաճախ ռուսներից պահանջում էր հայերենի իմացություն, ինչը հանգեցնում էր ռուսական ուսումնական հաստատություններում հայերենի դասավանդման անհրաժեշտության: Այսպես օրինակ՝ հայերենի դասավանդում մտցվեց Աստրախանի ժողովրդական գլխավոր ուսումնարանում, որին առընթեր 1795 թ. բացվեց հայերենի հատուկ դասարան տղաների և զինվորների երեխաների համար⁶:

19-րդ դ., երբ Արևելյան Հայաստանը մտավ Ռուսաստանի կազմի մեջ (1828 թ.) հայկական մշակույթը զարգացման ու վերելքի բուռն շրջան ապրեց, ինչը հանգեցրեց հայկական ազգային ուսումնական հաստատությունների կազմակերպման անհրաժեշտությանը: Նման կրթական օջախներ ստեղծվեցին ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանի և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Ղզլարում՝ Ղուբովի հայկական վարժարանը, Ղրիմում՝ Գ. Այվազովսկու նախագծի հիման վրա ստեղծված Խալիբյան

¹ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Ե., 2002, էջ 226:

² Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, Ե., 1984, էջ 73:

³ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հատոր առաջին, էջ 48:

⁴ Տե՛ս Хачикян Л., Армянские колонии на Украине в XVI-XVII вв // «Великая дружба», Е., 1954, էջ 196:

⁵ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հատոր առաջին, էջ 189:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 277:

ուսումնարանը, Նոր Նախիջևանի «Սուրբ Խաչ» վանքում հիմնված ժառանգավորաց դպրոցը և այլն¹: Իրենց լուսավորական գործունեությամբ առանձնանում էին Աստրախանի Աղաբաբյան ուսումնարանը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Սակայն արևելահայերի լուսավորության ու մշակույթի կյանքի ամենանշանավոր երևույթը Մոսկվայի Լազարյան ճեմարանն էր, որը հիմնադրվել էր Ռուսաստանում գործող խոշոր կալվածատեր և արդյունաբերող Հովհաննես Լազարյանի նախաձեռնությամբ և նրա սերունդների օժանդակությամբ 1815 թ.: Կրթօջախի նախնական նպատակն է եղել կրթություն տալ հայ աղքատ աշակերտների, սակայն շատ շուտով այն վեր է ածվել բազմաբնույթ ու բազմաստիճան բարեկարգ մի հաստատության՝ ընդունելով արևելագիտական թեքում, ուր ուսումնառում էին հայ և տարբեր ազգերի պատկանող աշակերտներ²: Ճեմարանում ավանդվում էին հույն-ռուսական և հայկական դավանանք, եկեղեցու պատմություն, պատմություն, աշխարհագրություն, տրամաբանություն, քերականություն, հանրահաշիվ, երկրաչափություն, ճարտասանական արվեստ, նկարչություն, երգ, պար և այլն: Լեզուներից դասավանդվում էին ռուսերեն, հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն: 1827 թ. ճեմարանն անվանվեց Արևելյան լեզուների Լազարյան հայկական ինստիտուտ: 1848 թ. նոր կանոնադրությամբ այն դառնում է առաջին կարգի բարձրագույն ուսումնական հաստատություն. վեցդասյա դասընթացին զուգահեռ ավելանում է արևելագիտական թեքումով երկդասյա մասնագիտական-լիցեյական բաժինը, որն իր ընդգրկումով հավասար էր Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժնին: Ճեմարանում ուսուցումը թեև ռուսերեն էր, սակայն հայագիտական բոլոր առարկաները՝ հայոց լեզու, հայոց պատմություն, մատենագիտություն և այլն դասավանդվում էին հայերեն: Ուշագրավ է, որ 19-րդ դ. 4-երջերին և 20-րդ դ. սկզբներին հայկական լուսավորական հաստատությունների, մասնավորապես դպրոցների նկատմամբ ցարական կառավարության հետադիմական ազգահալած ձեռնարկություններից Լազարյան ինստիտուտը՝ որպես հատուկ կրթօջախ, դուրս էր թողնվում կամ չնչին չափով էր դրանց ենթարկվում: Լազարյան ճեմարանը շնորհիվ այնտեղ դասավանդող հայ դասախոսների՝ Հարություն Ալմադարյան, Ստեփանոս Նազարյանց, Միքայել Նալբանդյան, Սմբատ Շահագիզ, Մսեր Մսրյանց, Մկրտիչ Էմին և հայ սովորողների մեծ տոկոսի, շարունակեց մնալ որպես հայկական լուսավորության առաջնակարգ կենտրոն, զարկ տվեց հայագիտությանը, եղավ հայերեն նոր դասագրքերի ստեղծման ու տպագրության, թատերական կյանքի, աշխարհաբար լեզվի մշակման օրրանը, հայ մտավորականներ պատրաստող օջախը: Այստեղ են սովորել ձանաչված հայ բանաստեղծներ Ռաֆայել Պատկանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Վահան Տերյանը, գեղանկարիչներ Եղիշե Թադևոսյանը, Քրիստափոր Հուսիկյանը, հայ գեղանկարչության մեջ պատմական ժանրի հիմնադիր, թարգմանիչ և արվեստի տեսաբան Վարդգես Սուրենյանցը, բանասեր, հայագետ-արևելագետ, թարգմանիչ Կարո Մելիք-Օհանջանյանը և ուրիշներ: Միաժամանակ Լազարյան ճեմարանը այն հազվագյուտ ուսումնական հաստատություններից էր, որտեղ առանց ազգային ու դավանանքի խտրականության հայերի հետ միասին ուսանում էին ռուսներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ: Այն դարձել էր նաև արևելագիտության ձևավորման ու զարգացման նշանավոր կենտրոն, ուր կրթություն են ստացել ռուս մշակույթի, գիտության, գրականության և արվեստի ականավոր գործիչներ՝ գրողներ Իվան Տուրգենևը, Յուրի Վեսելովսկին, Վլադիմիր Լիդինը, գրականագետ Դմիտրի Բլագոյը, բեմի նշանավոր վարպետ Կոնստանտին Ստանիսլավսկին, արևելագետներ Վլադիմիր Գորդլևսկին, Վադիմիր Մինորսկին, Ազաթանգել Կրիմսկին, բանասեր, թարգմանիչ, սլավոնագետ Ֆյոդոր Կորշը, հնագետ, ազգագրագետ, լեզվաբան Վսեվոլոդ Միլլերը և այլք³: 1829 թ. Լազարյան ճեմարանում հիմնվեց տպարան, որտեղ տպագրվում էին գեղարվեստական գրքեր, հայագիտական

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 287, 375, 437:

² Տե՛ս Բարխուդարյան Վ., Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դ. կես-XX դ. սկիզբ), Ե., 2010 թ., էջ 170-178, Երկանյան Վ., Հայկական մշակույթը 1800-1917 թթ., Ե., 1982, էջ 29:

³ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հատոր առաջին, էջ 311:

աշխատություններ, դասագրքեր, պարբերականներ, ընդ որում, Ռուսաստանում առաջին հայկական տպարանները հիմնվել էին 18-րդ դ. վերջին, նախ՝ Պետերբուրգում, որտեղ տպագրվել էր հայերեն առաջին գիրքը Ռուսաստանում («Այբեննարան»), ապա՝ Նոր Նախիջևանում, Աստրախանում, Թեոդոսիայում և այլ քաղաքներում¹: Հայկական տպարաններում հրատարակվում էին հայ ժողովրդի պատմությանը վերաբերող արժեքավոր գրքեր, պատմական կարևոր վավերագրերի ժողովածուներ, հայ ազգային մշակույթի գրավոր արժեքավոր հուշածանոցների թարգմանություններ, ռուս-հայերեն բառարաններ, որոնք իրենց նպաստն էին բերում Ռուսաստանում գրահրատարակչական գործի զարգացմանն ու տեղի հասարակայնությանը հայ ժողովրդի պատմամշակութային արժեքներին հաղորդակցմանը: Փաստորեն, Լազարյան ձեռարանը, զգալի դեր խաղալով հայ և ռուս ժողովուրդների գիտամշակութային կյանքի զարգացման գործում, մեծապես նպաստում էր նաև տվյալ բնագավառում երկու ժողովուրդների կապերի ամրապնդմանը: Ճեմարանի շնորհիվ հայ կրթական գործիչներն իրենց հերթին հաղորդակցվում էին ռուսական և Եվրոպական առաջավոր մտքին ու մշակույթին, ինչը հանգեցնում էր հայ մշակույթի և հասարակական մտքի առաջընթացին: Ուստի, պատահական չէր, որ ձեռարանը հանձինս իր շուրջ համախմբված առաջադեմ մտավորականների՝ Միքայել Նալբանդյան, Ստեփանոս Նազարյանց, Սմբատ Շահազիզ և այլք, կարևոր դեր խաղաց 19-րդ դ. հայ լուսավորական շարժման ծավալման գործում: Այսպիսով, Լազարյան ձեռարանը, իբրև բարձրակարգ և առաջադիմական կրթամշակութային օջախ, ոչ միայն նշանակալից դեր խաղաց հայագիտության, հայ գրականության, արվեստի, կրթության, հասարակական-քաղաքական մտքի և տպագրության զարգացման գործում, այլև մեծապես նպաստեց հայ և ռուս ժողովուրդների գիտամշակութային կապերի զարգացմանն ու երկու ժողովուրդների հոգևոր մշակութային արժեքների փոխհարստացմանը:

19-րդ դ. ռուսահայերի մտավոր կյանքի մակարդակը հասունացրել էր պարբերական մամուլ ունենալու անհրաժեշտությունը: Արևելահայ իրականությունում առաջին պարբերականը լույս տեսավ Աստրախանում 1816 թ., որպես տեղի ռուսական շաբաթաթերթի հայկական տարբերակը, գրաբարով («Արևելյան ծանուցմունք»)²: Այնուհետև հայկական պարբերականներ սկսեցին հրատարակվել Մոսկվայում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում և այլ հայաշատ կենտրոններում: Մասնավորապես, 1858 թ. սկզբին լազարյանականներ Մ. Նալբանդյանի և Ս. Նազարյանի նախաձեռնությամբ ու ջանքերով Մոսկվայում սկսվեց հրատարակվել Ռուսաստանում առաջին աշխարհաբար հայերենով պարբերականը՝ «Հյուսիսափայլ» հանդեսը, որը լուսաբանում էր հայ ազգային կյանքի, ժողովրդական կրթության զարգացման, աշխարհաբար գրական լեզվի մշակման հարցերը: Պարբերականը լայնորեն քարոզում էր հայ, ռուս և եվրոպական գրականության լավագույն ստեղծագործությունները, հրատարակում հաղորդումներ գիտության նվաճումների մասին³, դրանով իսկ խթանելով թե՛ հայագիտության, և թե՛ ընդհանրապես հասարակական գիտությունների զարգացմանը:

Այս առումով հարկ է նշել, որ հայ և ռուս ժողովուրդների ունեցած բազմադարյան սերտ կապերն ու շփումները առիթ են հանդիսացել, որպեսզի ռուսահայ իրականության մեջ 18-րդ դարից սկսած լայն ծավալ ստանա բառարանագիտությունը, որի մեջ կարևոր տեղ գրավեցին երկլեզվյան բառարանները: Դեռևս 1788 թ. Պետերբուրգում լույս տեսան հայ լեզվաբաններ Կղեոպատրա Սարաֆյանի և ապա Գրիգոր Խալդարյանի առաջին հայ-ռուսերեն բառարանները, որոնց հաջորդեցին Հ. Ալամդարյանի ռուս-հայերեն (Մոսկվա, 1821), Ա. Խուդաբաշյանի հայ-ռուսերեն (Մոսկվա, 1838), Գ. Երիցյանի ռուս-հայերեն (Թիֆլիս, 1854), Հ. Դադբաշյանի ռուս-հայերեն (Թիֆլիս, 1906) և հայ-ռուսերեն (Թիֆլիս, 1911) բառարանները⁴, որոնք նպաստում էին երկու ժողովուրդների գիտա-մշակութային առնչությունների խորացմանը:

¹ Տե՛ս Երկանյան Վ., նշվ. աշխ., էջ 71:

² Տե՛ս նույն տեղում, էջ 81:

³ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հատոր առաջին, էջ 312-313:

⁴ Տե՛ս Երկանյան Վ., նշվ. աշխ., էջ 103-104:

19-րդ դ.-20-րդ դ. առաջին կեսին Ռուսաստանում լայն գործունեություն են ծավալել նաև խոշոր հայազետ-պատմաբաններ, որոնք կարևոր դեր են խաղացել հայ ժողովրդի հարուստ մշակույթի և պատմության քիչ ուսումնասիրված հարցերի վրա ռուսաստանյան գիտական շրջանների ուշադրությունը հրավիրելու գործում, ռուսերեն հրատարակել են նաև հայ պատմիչների գործեր, արխիվային փաստաթղթերի հիման վրա լուսաբանել հայ-ռուսական հարաբերությունները: Նրանցից են Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Էմինը, վերջինիս աշակերտներ՝ Ռուսական հնագիտական ընկերության արժաթե մեծ մեդալի արժանացած Քերովբե Պատկանյանը, Գրիգոր Խալաթյանը, որն իր ուսուցչի մահից հետո գլխավորեց Մոսկվայի հայագիտական դպրոցը, նշանավոր պատմաբան-աղբյուրագետ, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Նիկոլայոս Ադոնցը, Պետերբուրգում աշխատող Կարապետ Եզեկյանը և ուրիշներ: Հայաստանի պատմության հարցերով զբաղվել են նաև ռուս գիտնականներ, որոնք կարևոր ավանդ են ներդրել հայ ժողովրդի պատմության և մշակույթի հարցերի լուսաբանման գործում: Նրանցից էր Սերգեյ Գլինկան, որը 1830-ական թթ. հրատարակեց «Հայ ժողովրդի պատմության տեսությունը» և մասնակցություն բերեց հայոց պատմությանը վերաբերող վավերագրերի եռահատոր ժողովածուի կազմմանը: Արժեքավոր էր նաև հայտնի վիճակագիր Իվան Շոպենի 19-րդ դ. կեսին հրատարակած և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Դեմիդովյան մրցանակին արժանացած Հայկական մարզի վարչական, տնտեսական, մշակութային կյանքին նվիրված աշխատությունը: Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի պատմության շատ հարցերի են անդրադարձել պատմաբաններ Նիկոլայ Դուբրովինը, Վասիլի Պոտտոն, ինչպես նաև նշանավոր արևելագետ, հայագետ, լեզվաբան և հնագետ Նիկոլայոս Մառը, որն իր գիտական գործունեությունը սկսելով որպես հայ մատենագրության պատմաբան, իր արժեքավոր ներդրումն է ունեցել Հայաստանի հնագիտական հուշածանների ուսումնասիրության գործում 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին հիմնավորապես զբաղվելով հատկապես Անիի և Վանի պեղումներով, որոնց ակտիվորեն մասնակցել են հայ խոշոր արևելագետ ու հնագետ Հովսեփ Օրբելին, նշանավոր ճարտարապետ Թորոս Թորանյանը և այլք¹:

Հայ-ռուսական առնչությունները դրսևորվում էին նաև հասարակագիտական այլ ճյուղերում՝ մասնավորապես փիլիսոփայության և տնտեսագիտության բնագավառում: Այս առումով հատկանշական էր, որ հայ փիլիսոփայական և տնտեսագիտական մտքի վրա մեծ հետք թողած հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի հասարակական-քաղաքական ու փիլիսոփայական հայացքները ձևավորվել էին ռուս մտածողներ Գերցենի, Չերնիշևսկու և Օգարևի գաղափարական ազդեցությամբ: 19-րդ դ. վերջերին և 20-րդ դ. առաջին կեսին Ռուսաստանում լայնորեն հայտնի էին հայազգի խոշոր տնտեսագետներ Կազանի և Կիևի համալսարանների պրոֆեսոր Սողոմոն Եղիազարյանը, հիսունից ավելի մենագրությունների հեղինակ Ստեփան Գուլիշամբարովը, որն ակտիվորեն մասնակցել էր «Ռուսական գյուղատնտեսական լիակատար հանրագիտարանի» ստեղծմանը, Պետերբուրգի և Մոսկվայի համալսարաններում դասավանդած Վահան Թոթոմյանցը, Մոսկվայի համալսարանի դասախոս Մենտոր Բունիաթյանը²: 20-րդ դ. երկրորդ կեսին խորհրդային տնտեսագիտական մտքի անվանի ներկայացուցիչներից էին ակադեմիկոսներ Աբել Աղանբեգյանը և Ստեփան Սիտարյանը, որոնց գիտաստեղծագործական և հասարակական կյանքը բազում թելերով կապված էր Ռուսաստանի հետ:

Ռուսաստանում բնական գիտությունների զարգացման գործում ևս հայազգի գիտնականները զգալի դեր են խաղացել: Այսպես օրինակ՝ 19-րդ դ. վերջերին և 20-րդ դ. առաջին կեսին ռուսական բժշկագիտության մեջ մեծ հեղինակություն էին վայելում նշանավոր համաճարակաբան Մարգար Առուստամովը, հայտնի վիրաբույժ Համբարձում Քեչեկը, ճանաչված նյարդաբան, Ռուսաստանի ռազմաբժշկական ակադեմիայի

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 109-113, 118:

² Տե՛ս նույն տեղում, էջ 130-133:

նյարդային հիվանդությունների ամբիոնի ղեկավար Սիխայիլ Աստվածատուրովը: Անասնաբուծության զարգացման բնագավառում իրենց ներդրումն են ունեցել Ալեքսանդր և Ավետիս Քալանթարյանները: Ռուսաստանում հողի միկրոկենսաբանության առաջին ուսումնասիրողներից էր Պապա Քալանթարյանը: Գինեգործությունը և խաղողագործությունը գիտական հիմքերի վրա դնելու գործում աչքի ընկնող դեր է խաղացել Վասիլ Թայիրովը, որը 1905 թ. Օդեսայում կազմակերպել է Ռուսաստանում առաջին գիտափորձնական կայանը և հիմնել ու խմբագրել է «Վեստնիկ վինոգրեիս» ամսագիրը: Ֆիզիոլոգիայի ասպարեզում ռուս մեծ գիտնական Իվան Պավլովի աշակերտներից ու հետևորդներից էին ռուսական բժշկագիտության զարգացման գործում նշանակալից դեր խաղացած «Ռուսական ֆիզիոլոգիական ամսագրի» հիմնադիր Վարդան Վարդանովը և էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիր Լևոն Օրբելին: Վերջինիս, ինչպես նաև Հովսեփ Օրբելու ավագ եղբայր Ռուբեն Օրբելին գիտության նոր ճյուղի՝ հիդրոհնագիտության հիմնադիրն էր: Ռուսաստանում արգասաբեր գործունեություն է ծավալել նաև միջազգային ճանաչում ունեցող երկրաբան և բյուրեղագետ, 500 աշխատությունների հեղինակ, Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Անդրեաս Արծրունին, որը ուսումնասիրել է նաև Ուրալի և Հայաստանի հանքային հարստությունները: Կովկասի և Դրիմի երկրաբանական ուսումնասիրություններով հայտնի էր Լեոնիդ Սպենդիարյանը, ում անունով Միջազգային երկրաբանական կոնգրեսը հատուկ մրցանակ է սահմանել, որը սկսած 1900 թ. շնորհվում է երկրաբանական լավագույն աշխատանքի հեղինակին¹:

Գիտության բնագավառում հայ-ռուսական առնչությունները հատկապես մեծ զարգացում ապրեցին խորհրդային ժամանակաշրջանում: Ռուսաստանում էին կրթություն ստացել և որպես գիտնականներ ձևավորվել գիտության բնագավառի 20-րդ դարի հայազգի նշանավոր գործիչներ աշխարհահռչակ աստղագետ և աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը, միջուկային ֆիզիկայի խոշոր մասնագետներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները, ականավոր կենսաքիմիկոս Նորայր Սիսակյանը, էլեկտրամեխանիկայի խորհրդային դպրոցի հիմնադիր Անդրանիկ Իոսիֆյանը, ճանաչված քիմիկոս Նիկողայոս Ենիկոլոպովը, հայտնի բուսաբաններ Միքայել Չայլախյանը, Արմեն Թխտաջյանը, անվանի բժիշկներ Լևոն Փիրուզյանը, Լևոն Բադալյանը և շատ ուրիշներ, ովքեր, անուրանալի ներդրում ունենալով թե ԽՍՀՄ-ում, և թե Ռուսաստանում ու Հայաստանում գիտության ոլորտի զարգացման գործում, մեծապես նպաստել են նաև տվյալ բնագավառում հայ-ռուսական կապերի սերտացմանն ու ծավալմանը:

Ռուսական ազդեցության ներքո էր զարգանում նաև արևելահայ գրականությունը: Խոսելով այդ ազդեցության մասին, ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը գրել է. «...սիրով ու պատկառանքով խոնհարվում են ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև՝ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ շատերը²»: Իր հերթին հայ ժողովրդի մեծ բարեկամ ռուս բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, գրականագետ և պատմաբան Վալերի Բրյուսովը, անդրադառնալով հայ պոեզիային, գրել է. «Սև ամպերի միջից, որ այնքան անգամ պատել են հայոց պատմության հորիզոնները, ահեղ ու հեղձուցիչ խավարի միջից, որ այնքան անգամ ծածկել է հայ ժողովրդի կյանքը, հաղթականորեն ձեռքել և ցայսօր շողշողում են նրա պոեզիայի հրավառ ճառագայթները³»: Հայ-ռուսական գրական առնչություններում նշանակալի երևույթ էր Մոսկվայում Մկրտիչ Էմինի ջանքերով սկզբնավորված ռուս գրականության թարգմանության գործը՝ 19-րդ դ. 40-ական թվականներին այստեղ հայերեն լույս տեսան ժուկովսկու, Դերժավինի, Պուշկինի, Լերմոնտովի, Կռիլովի, Բարատինսկու բանաստեղծությունները⁴: Հետագայում ռուս գրողների ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները լայն ծավալներ

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 135-145:

² Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1969, էջ 242:

³ Բրյուսով Վ., Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Ե., 1967, էջ 134:

⁴ Երկանյան Վ., նշվ. աշխ., էջ 155:

ընդունեցին: Նույն դարի 80-90-ական թվականներին արևմտահայ արձակագիր, հրապարակախոս, գրական քննադատ, խմբագիր Արփիար Արփիարյանը իր պարբերականներում տպագրեց թարգմանություններ Պուլշկինից, Տուրգենևից, Լերմոնտովից, ինչի շնորհիվ ռուս գրականության լավագույն ստեղծագործություններին ծանոթանալու հնարավորություն ընձեռվեց նաև արևմտահայության համար¹: Ռուս ընթերցող շրջաններում հայ գրականության տարածման, ինչպես նաև միջազգային ճանաչման համար կարևոր էին նաև հայերենից կատարվող թարգմանությունները, որոնք Ռուսաստանում մեծ թափ ստացան 19-դ դ. վերջից և 20-րդ դ.: Յուրի Վեսելովսկու և Մինաս Բերբերյանի «Հայ բելետրիստներ» ժողովածուից հետո՝ 20-րդ հարյուրամյակի սկզբին լույս տեսան մի շարք թարգմանական ժողովածուներ և առանձին գրքեր, որոնց պսակը հանդիսացան 1916 թ. Մաքսիմ Գորկու խմբագրությամբ հրատարակված «Հայ գրականության ժողովածուն» և նույն թվականին Վ. Բոյուսովի խմբագրությամբ լույս ընծայված «Հայ պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» անթոլոգիան ուր հավաքված էին հայ բանաստեղծության լավագույն նմուշները՝ հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի սկիզբը: Այդ ժողովածուն ռուս ընթերցողին առաջին անգամ ծանոթացրեց հայ ժողովրդի հին ու միջնադարյան պոեզիայի բարձրարժեք կերտվածքներին, նոր ժամանակաշրջանի հայ բանաստեղծների ստեղծագործություններին: Խորհրդային տարիներին երկու ժողովուրդների գրական արժեքների թարգմանական հրատարակումներն աննախադեպ ծավալների հասան: Հենց այդ ժամանակաշրջանում են Մոսկվայում իրենց գրական կրթությունը ստացել 20-րդ դ. հայ անվանի գրողներ Պարույր Սևակը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Հովհաննես Շիրազը և ուրիշներ, որոնք մեծ հեղինակություն էին վայելում նաև ռուսաստանյան գրական շրջաններում: Հայ-ռուսական գրական սերտ առնչությունների ցայտուն դրսևորումներից էր նաև երկու ժողովուրդների մտավորականության ներկայացուցիչների պատշաճ արձագանքները համաշխարհային արժեք ներկայացնող գրական երևույթներին: Այսպես օրինակ՝ 1910 թ. նոյեմբերի 8-ին ռուս մեծանուն գրող Լ. Տոլստոյի մահվան կապակցությամբ Լազարյան ձեմարանում հատուկ նիստ հրավիրվեց, ինչպես նաև նրա անունով ոսկե մեդալ սահմանվեց, որով պարգևատրվելու էր Արևելքը Լ. Տոլստոյի գրավածքներում՝ ռուսանողական լավագույն աշխատանքը: Ռուս հանձարեղ բանաստեղծ Ա. Պուլշկինի ծննդյան 100-ամյակի առթիվ հայ գործիչները մեծ պոետին նվիրված մի շարք հոդվածներ հրատարակեցին, իսկ Ա. Ծատուրյանը առանձին գրքով լույս ընծայեց «Բախչիսարայի շատրվանը» պոեմի շքեղ հրատարակությունը, որի նկարչական ձևավորումը կատարել էր արդեն ճանաչված նկարիչ Վարդգես Սուրենյանցը² և նման օրինակները շատ են:

19-20-րդ դդ. զարգանում էին նաև հայ-ռուսական գեղարվեստական առնչությունները, ինչը ցայտուն դրսևորվում էր երաժշտության, կերպարվեստի և թատրոնի բնագավառներում: Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի երաժշտական ուսումնական հաստատություններում են կրթվել և որպես երաժիշտներ ձևավորվել հայազգի անվանի երգահաններ հայ ազգային երաժշտական դպրոցի ձևավորման երախտավոր Մակար Եկմայանը, հայ սինֆոնիկ երաժշտության հիմնադիր Ալեքսանդր Սպենդիարյանը, հայ դասական ռոմանսի հիմնադիր Ռոմանոս Մելիքյանը, երաժշտագետ Բարսեղ Ղորղանյանը, որն առաջիններից էր նկատել երիտասարդ Ֆ. Շալյապինի տաղանդը և լուսաբանել «Պուլշկինը երաժշտության մեջ» թեման, ջութակահար-մանկավարժ Հովհաննես Նալբանդյանը, երգիչներ Նադեժդա Պապայանը, Տիգրան Նալբանդյանը, Ներսես Շահլամյանը, Պավել Լիսիցյանը, Զարուհի Դոլուխանյանը և ուրիշներ, ովքեր հետագայում իրենց գործունեությամբ նպաստեցին մի կողմից՝ հայ երաժշտության բուռն վերելքին, իսկ մյուս կողմից՝ իրենց կարևոր ավանդը բերեցին Ռուսաստանի երաժշտական կյանքում³: Մոսկվայում էր զարգանում նաև 20-րդ դ. հայ հանձարեղ երգահան Արամ

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 187:

² Տե՛ս Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ. Ս., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, Ե., 2015, էջ 164:

³ Տե՛ս Աղայան Ա., Ասատրյան Ա., Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար-XX դարի սկիզբ), Ե., 2015, էջ 96:

Խաչատրյանի տաղանդը, ում կյանքն ու ստեղծագործական գործունեությունը անբաժանելի էր համաշխարհային, այդ թվում և հայկական ու ռուսական մշակույթների նվաճումներից: Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների զարգացմանը զգալիորեն նպաստեց խորհրդային իշխանության առաջին տարիներին Մոսկվայում հիմնված Հայ մշակույթի տունը¹, որը դարձել էր հայ երիտասարդ արվեստագետների ստեղծագործական որակավորման կատարելագործման կարևորագույն օջախ: Այն մեծ ներդրում ունեցավ նաև հետպատերազմյան ժամանակաշրջանում հայ տաղանդաշատ երգահանների մի ամբողջ սերնդի՝ Առնո Բաբաջանյան, Էդվարդ Միրզոյան, Ալեքսանդր Հարությունյան, Ադամ Խուդոյան և այլք, մասնագիտական վարպետության հղկման գործում, որում մեծ էր նրանց ուսուցիչներ Արամ Խաչատրյանի, ինչպես նաև Ռուսաստանի երաժշտական կյանքում լայն հեղինակություն վայելող Վիսարիոն Շեբալինի և Յուրի Ֆորտունատովի անուրանալի վաստակը: Երաժշտության բնագավառում դրսևորվում էր նաև երկու ժողովուրդների մշակույթների տարբեր ոլորտների վառ ներկայացուցիչների ստեղծագործական յուրահատուկ համագործակցությունը: Վերջինի ցայտուն օրինակներից էին Մաքսիմ Գորկու համանուն ստեղծագործության հիման վրա Ալեքսանդր Սպենդիարյանի կողմից գրված «Ձկնորսը և փերին» երաժշտական բալլադը, Սերգեյ Ռախմանինովի «Գիշերն իմ այգում» ռոմանսը՝ Ավետիք Իսահակյանի խոսքերով (Ալեքսանդր Բլոկի թարգմանությամբ), Գեորգի Սվիրիդովի «Հայրերի երկիր» վոկալ շարքը՝ դարձյալ Ա. Իսահակյանի խոսքերով, հայ միջնադարյան հանձարեղ տաղերգու Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի (Նաում Գրեբնևի թարգմանությամբ) հիման վրա Ալֆրեդ Շնիտկեի հեղինակած «Կոնցերտ երգչախմբի համար» մեծածավալ ստեղծագործությունը² և այլն:

Հայ-ռուսական գեղարվեստական սերտ առնչություններն արտահայտվում էին նաև կերպարվեստի բնագավառում: Դեռևս 17-րդ դ., երբ սերտացան հայ-ռուսական առևտրական կապերը, Ռուսաստան սկսեցին ներթափանցել նաև հայ ոսկերիչների, արծաթագործների, արծնապակու վարպետների գեղարվեստական արժեք ներկայացնող գործեր, որոնցից շատ նմուշներ, այդ թվում նաև Ալեքսեյ Միխայլովիչ ցարին ընծայած «Ալմաստե գահը», պահվում են Մոսկվայի Կրեմլի Ջինապալատում: Սկսվեցին Մոսկվա հրավիրվել նաև արհեստների և արվեստների բազմաթիվ հայ վարպետներ, որոնց թվում էր հայտնի նկարիչ Բոգդան Սալթանովը, որը ոչ միայն անվանի գեղանկարիչ էր, այլև դառնալով Կրեմլի Ջինապալատի գեղանկարչական արվեստանոցի ղեկավար, կերպարվեստի մի ամբողջ դպրոց ստեղծեց: 19-րդ դարի սկզբին Անդրկովկասի Ռուսաստանին աստիճանական միացմանը զուգընթաց հաճախակիանում էին ռուս նկարիչների այցելությունները Հայաստան, ինչի արդյունք են Միխայիլ Իվանովի, Անդրեյ Ուխտոմսկու, Նիկոլայ Սերգեևի, Իյա Մաշկովի և այլոց ինքնատիպ գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքները: Ռուսաստանում մասնագիտական կրթություն են ստացել և որպես գեղանկարիչներ ձևավորվել հայազգի աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին, մեծանուն գեղանկարիչ Մարտիրոս Սարյանը, նշանավոր դիմանկարիչներ Հակոբ Հովնաթանյանը, ռուս հանրահայտ գրողներ Լև Տոլստոյի, Իվան Տուրգենևի, Ֆյոդոր Դոստոևսկու դիմանկարները հեղինակած Քրիստափոր Հուսիկյանը, հանրաձանաչ բնանկարիչներ Գևորգ Բաշինջաղյանը, Փանոս Թերլեմեզյանը, Եղիշե Թադևոսյանը, հայ կերպարվեստում պատմանկարի հիմնադիր Վարդգես Սուրենյանցը և ուրիշներ, ովքեր, կրելով ռուսական գեղանկարչության ազդեցությունը, զգալի հետք են թողել հայկական կերպարվեստի զարգացման մեջ³:

¹ 1921 թ. աշնանը Լազարյան ձեռարանի շենքում բացվեց Մոսկվայի հայ մշակույթի տունը, որը ստուդիական ուսուցման միջոցով դերասանական, ռեժիսորական, օպերային, պարարվեստի, երաժշտական, կերպարվեստի մասնագիտական կադրեր էր պատրաստում խորհրդային Հայաստանի համար, ինչպես նաև հոգում էր հայ մշակույթի գործիչների կատարելագործման, նրանց ստեղծագործական վարպետության բարձրացման մասին:

² Տե՛ս Սարդարյան Գ., Նարեկացին և Ալֆրեդ Շնիտկեն, «Նյութ» տեղեկատվական հարթակ, Ե., 16 նոյեմբեր, 2017:

³ Տե՛ս Աղասյան Ա., Ասատրյան Ա., նշվ. աշխ., էջ 9-58:

Նրանց գաղափարական գեղարվեստական կապերը ռուս հայտնի նկարիչներ Իյա Ռեպինի, Վալենտին Սերովի, Վասիլի Պոլենովի, Միխայիլ Վրուբելի և այլոց հետ նպաստեցին փոխադարձ ստեղծագործական առաջընթացին, միևնույն ցուցահանդեսներում հանդես գալուն: Խորհրդային իշխանության տարիներին Ռուսաստանի գեղարվեստական բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական կրթությունն են ստացել անվանի հայ նկարիչներ Միեր Աբեդյանը, Հովհաննես Ջարդարյանը, Մարիամ և Երանուհի Ասլամազյանները, Արա Բեքարյանը, Մինաս Ավետիսյանը և ուրիշներ: Հայաստանի գեղարվեստական կերպարը մարմնավորող կտավներ են ստեղծել ռուս նկարիչներ Պավել Կուզնեցովը, Ալեքսանդր Դրևինը, Նադեժդա Ուդալցովան, Պավել Շիլինգովսկին և այլք: Մոսկվայի Հայ մշակույթի տան նկարչական ստուդիայում դասավանդել են ռուս հայտնի նկարիչներ Սերգեյ Գերասիմովը, Բորիս Իոհանսոնը, Կոնստանտին Յուզոնը: Այստեղ բացի մշտական ցուցանմուշներից, պարբերաբար կազմակերպվում էին հայ նկարիչների ցուցահանդեսներ: Նման ցուցահանդեսներ կազմակերպվում էին նաև Ռուսաստանի այլ քաղաքներում: Հայաստանի պետական պատկերասրահի և այլ թանգարանների միջոցով կատարվում էին գեղարվեստական հավաքածուների, առանձին գործերի փոխադարձ փոխանակումներ: Ռուսաստանի գանազան քաղաքների թանգարաններում ցուցադրվում էին հայ արվեստագետների գործերը, իսկ Հայաստանի պետական պատկերասրահում մշտապես գործում էր ռուսական արվեստի բաժինը:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին առանցքային դեր խաղաց հայ և ռուս ժողովուրդների միջև թատերական կապերի զարգացման գործում: 19-րդ դարի 60-ական թվականներից սկսած՝ ռուս գրականության գրեթե բոլոր նշանավոր երկերը խաղացվել են հայ թատրոնում¹: Նույն դարի կեսերին Մոսկվայում և Պետերբուրգում հյուրախաղերով մեծ հաջողությամբ հանդես էր գալիս նշանավոր հայ դերասան Պետրոս Ադամյանը՝ արժանանալով ռուս հանդիսատեսի հիացմունքին²: Հայ բեմի վարպետները սիրել և քարոզել են հայ իրականության մեջ ռուսական թատրոնի առողջ ավանդույթներն ու ռուսական դրամատուրգիայի լավագույն արժեքները: 1877 թ. դեկտեմբերին առաջին անգամ Երևանում բեմադրվեց Ալեքսանդր Գրիբոեդովի «Խելքից պատուհասը» ստեղծագործությունը, որին ներկա էր հեղինակը: Հայ թատրոնի երախտավորների զգալի մասի գեղարվեստական հայացքները ձևավորվել էին ռուսական թատերական աշխարհի ազդեցության ներքո, քանի որ նախախորհրդային ժամանակաշրջանում Հայաստանում թատերական ուսումնական հաստատության բացակայության պայմաններում նրանցից շատերը մասնագիտական կրթությունը ստացել էին Մոսկվայում և Պետերբուրգում, իսկ դերասանական վարպետությունը բարձրացնելու նպատակով խաղացել ռուսական բեմում: Այսպես օրինակ՝ Օվի Սևունյանը Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում Կ.Ստանիսլավսկու և Վ. Նեմիրովիչ-Ղանչենկոյի ղեկավարությամբ ուսումնասիրել է ռեժիսորական արվեստը: Նույն թատրոնում դերասանական արվեստի ուսումնասիրությամբ զբաղվել են Հովհաննես Ջարիֆյանը, Միքայել Մանվելյանը, Եկատերինա Դուրյան-Արմենյանը, Իսահակ Ալիխանյանը և ուրիշներ: Մոսկվայում է աշխատել նաև բեմադրիչ Արշակ Բուրջալյանը, իսկ Ամո Խարազյանը իր բեմական կրթությունը ստացել է Ռուսաստանի մայրաքաղաքի Վ. Նեմիրովիչ-Ղանչենկոյի ղեկավարությամբ գործող ուսումնարանում, որի հիման վրա հետագայում կազմակերպվեց թատերական արվեստի պետական ինստիտուտը (ԳԻՏԻՍ), որտեղ ուսանել են հայ թատրոնի շատ գործիչներ, դերասաններ և բեմադրիչներ: Պետերբուրգում իրենց թատերական կրթություն են ստացել բեմադրիչ Լևոն Քալանթարը, ինչպես նաև դերասանուհի Սաթենիկ Ադամյանը: Ռուսական դրամատիկական կուրսերում ուսանել են նաև Գևորգ Պետրոսյանը, Աննա Խիթարյանը, Նիկողայոս Հովհաննիսյանը և ուրիշներ: Նշյալ դերասանների և բեմադրիչների սերունդը, հարստացած ռուսական բեմական

¹ Ջարյան Ռ., «Կենդանի դիակի» բեմական պատմությունից, Հայ-ռուսական թատերական առնչություններ, Ե, 1978, էջ 5:

² Տե՛ս Բարխուդարյան Վ., նշվ.աշխ., էջ 314-319:

դպրոցի լավագույն ավանդներով, վերադարձավ հայրենի բեմ՝ խոշոր դեր կատարելով հայ թատրոնի գեղարվեստական զարգացման ու նրա ազգային ինքնության հաստատման գործում¹:

Հայ-ուսական թատերական փոխառնչությունների արդյունավետության և կենսունակության վառ դրսևորումներից էր Մոսկվայի հայկական պետական դրամատիկական ստուդիայի գործունեությունը, որը, ստեղծվելով 1919 թ. մարտին և գործելով նախկին Լազարյան ճեմարանի շենքում տեղակայված Հայ մշակույթի տանը, 1924 թ. ամռանն անցավ Հայկական ԽՍՀ իրավասության տակ՝ վերանվանվելով Հայաստանի դրամատիկական ստուդիա Մոսկվայում: Փաստորեն, հայ թատրոնի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց պետական թատերական ուսումնական հաստատություն հայերի համար, որն ընդմիջումներով և տարբեր անվանումներով Մոսկվայում գործեց շուրջ 30 տարի՝ զգալի դեր խաղալով հայ թատրոնի համար դերասաններ և բեմադրիչներ կրթելու գործում: Համաձայն ստուդիայի կանոնադրության՝ այստեղ սովորելն անվճար էր, ուսուցումը կատարվում էր հայերեն և ռուսերեն լեզուներով, շրջանավարտները պարտավոր էին աշխատել հայկական թատրոններում և այլն: Ստուդիայի դասախոսների թվում են եղել Վալերի Բոյուտովը, Վահան Տերյանը, Հովսեփ Օրբելին, Նիկողայոս Ադոնցը, Նիկողայոս Մառը և ուրիշներ: Մասնագիտական առարկաները դասվանդել են ռուսական արվեստի հանրաճանաչ գործիչներ Ելենա Վիտաչեկ-Գնեսինյան, Էլլա Ռաբանեկը, Կոնստանտին Ստանիսլավսկին, Եվգենի Վախթանգովը, Ռուբեն Սիմոնովը, Իոսիֆ Ռապոպորտը, Ալեքսանդր Գեյրոտը, Բորիս Շչուկինը և այլք²: Թեև ստուդիայի կանոնադրության հիմքում ընկած էր Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի և Ե. Վախթանգովի ստուդիաների սկզբունքները, սակայն այն խաղացանկով, ստեղծագործական ոճով և ուսուցման մեթոդով հայկական էր: Ստուդիականները, բացի պարապմունքներից, պարբերաբար կազմակերպում էին հայ պոեզիային, երաժշտությանը, դրամատուրգիային նվիրված երեկոներ, որոնց մասնակցում էին նաև Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի հայտնի դերասաններ, Մեծ թատրոնի ճանաչված մեներգիչներ: Նման երեկոներն օգնում էին մոսկվացիներին առավել խորը և բազմակողմանի ծանոթանալ հայ մշակույթին: Ստուդիայի խաղացանկում էին Սերվանտեսի, Շիլլերի, Սթրինբերգի, Լերմոնտովի, Գոգոլի, Շիրվանզադեի, Շանթի, Չարենցի, Դեմիրձյանի երկերի բեմադրությունները: Ուսումնական աշխատանքների կենտրոնական տեղում էին Գ. Սունդուկյանի և Հ. Պարոնյանի ստեղծագործությունները, որոնք ներկայացվել են Երևանում, Լենինականում (ներկայիս Գյումրի), Դոնի Ռոստովում, Արմավիրում (Ռուսաստան), Մայկոպում, Նովոռոսիյսկում, Օրջոնիկիձեում (Վլադիկավկազ) և այլուր: Ստուդիայի գործունեությունն ավելի ու ավելի էր իր վրա սևեռում հայ և ռուս գեղարվեստական մտավորականության և թատերասեր հասարակայնության ուշադրությունը: Ստուդիայի հաճախակի հյուրերն էին նշանավոր գեղանկարիչ Մարտիրոս Սարյանը, հայտնի բեմադրիչ ու դերասան Յուրի Ջավադսկին, մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցը և ուրիշներ, որոնց հետ շփումները ստեղծագործական ոգևորություն էին առաջացնում ստուդիայի երիտասարդ սաների մոտ՝ նպաստելով նրանց ընդհանուր մշակութային մակարդակի բարձրացմանը: Ըստ էության, 20-րդ դարի տարբեր ժամանակահատվածներում Մոսկվայում գործած հայկական թատերական ստուդիան բացառիկ դեր խաղաց հայ երիտասարդ դերասանների և բեմադրիչների պատրաստման, նրանց վարպետության բարձրացման գործում: Ստուդիայի շրջանավարտներից են հայ թատրոնի և կինոյի ականավոր գործիչներ Ամեն Գուլակյանը, Վարդան Աճեմյանը, Վավիկ Վարդանյանը, Թադևոս Սարյանը, Մուրադ Կոստանյանը, Յուրի Երզնկյանը, Լաերտ Վադարյանը, Արմո Արմենյանը և ուրիշներ³: Ռուսաստանում են իրենց մասնագիտական մկրտությունը ստացել նաև հայ թատրոնի և կինոյի 20-րդ դարի այլ հայտնի ներկայացուցիչներ Հրաչյա Ղափլանյանը, Արտավազդ Փելեշյանը, Ֆրունզե Դովլաթյանը,

¹ Տե՛ս Հարությունյան Բ., Հայկական պետական դրամատիկական ստուդիաները Մոսկվայում (1918-1947), Հայ-ռուսական թատերական առնչություններ, էջ 68-69:

² Տե՛ս նույն տեղում, էջ 71-72, 83:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 91:

Հենրիկ Մայանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Ներսես Հովհաննիսյանը և այլք: Նրանք բոլորն էլ օգտագործելով Ռուսաստանում ձեռքբերված մասնագիտական գիտելիքները իրենց մեծ ավանդն ունեցան հայ թատերական արվեստի և կինոյի զարգացման գործում:

Այսպիսով, հայ և ռուս ժողովուրդների հոգևոր ու մշակութային արժեքների միահյուսման պատմական ավանդույթները ամուր հենք հանդիսացան հետխորհրդային շրջանում ՀՀ և ՌԴ միջև գիտամշակութային կապերի զարգացման համար:

Астгик Азизбекян, Институт истории НАН РА, соискатель Исторические предпосылки научно-культурных связей между РА и РФ. После развала СССР в развитии многогранных отношений между Республикой Армения и Российской Федерацией важную роль играло богатое культурно-историческое наследие связывающее двух народов, которое начало формироваться еще в средние века. Именно вековые традиции переплетения духовно-культурных ценностей армянского и русского народов стали прочной основой развития научно-культурных связей между РА и РФ в постсоветский период.

Ключевые слова: Армения, Россия, армянские поселения, культурные и духовные взаимоотношения, архитектура, искусство, учебные заведения, наука, литература, музыка.

Astghik Azizbekyan, Historical Preconditions for Scientific and Cultural Ties between the Republic of Armenia and the Russian Federation. After the collapse of the USSR an important cultural and historical heritage, that has connected the two people since the Middle Ages, played significant role in the development of multifaceted relations between the Republic of Armenia and the Russian Federation. It is the centuries-old traditions of the intertwining of the spiritual and cultural values of the Armenian and Russian people that have become a solid foundation for the development of scientific and cultural ties between the Republic of Armenia and the Russian Federation in the post-Soviet period.

Key words: Armenia, Russia, Armenian colonies, cultural and spiritual relationship, architecture, art, educational institutions, science, literature, music.